



ՄԱՅՐ ԱԹՈՒՐ ԵՎ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ



ասն և վեց դարերի պատկանե-
լի հնություն ունի Հայ Առաքե-
լական Մայր եկեղեցին: Նրա
սրբազան կենտրոնը—Մայր Ա-

թոռ, որը հիմնվել է Ս. Էջմիածնում, մշտա-
պես սատարել է ազգային կենսատու միաս-
նականությունը և զորավիգ հանդիսացել
հայ պետության փառափառ հզորացմանը:
Հայրենասիրությունը հայ եկեղեցու կարևոր
ատանձնահատկություններից մեկն է հաճ-
դիսացել: Հայ եկեղեցու այդ ատանձնա-
հատկությունը շատ պարզ բնորոշված է Ա-
մենայն Հայոց Հայրապետի սույն բովի նոր
տարվա օրհնության կոնդակում, «Հայաս-
տանյայց Ազգային Առաքելական Սուրբ Ե-
կեղեցին ոչ միայն հոգևոր-կրոնական հաս-
տատություն է, այլև միաժամանակ ազգա-
յին-հայրենական: Ազգային-կրոնական այս
երկակի բնության այս ներդաշնակ միաս-
նության մեջ է բարոյական հմայվե ու պատ-
մական խորհուրդը լուսավորչանիմն ազգա-
յին Հայ եկեղեցու, որի անառատության և
վեհերավության համար դարեր շարունակ
հալածվել և մարտիրոսացել է բազմաշա-
շար հայ ժողովուրդը»:

Սկսած այն օրից, երբ հայ ժողովուրդը
կոյրեց իր փառափառ անկախությունը և
բնկավ օտար լծի տակ, Մայր Աթոռ իր վրա
վերցրեց փառափառն որոշ դեր: Քաղաքա-
կան այդ դերը եւ վերցրեց պատմական շա-
րադետ իրադրությունների հարկադրանքի
տակ, ակամա, հայրենասիրական իր պարտ-
քի թելադրանքով՝ երազելով այն երջանիկ
օրվան, երբ հայ ժողովուրդը կվերականգնի
իր փառափառ անկախությունը և եւ հնա-
րավորություն կունենա իր վերցրած փառա-

փառան դերը հանձնել իր իսկական տիրո-
ջը—Հայ Պետականությանը և ամբողջապես
նվիրվել իր եկեղեցական գործերին:

Պատմական փոքորիկների և անլուր հա-
լածանքների պայմաններում Մայր Աթոռը
պատվով է կատարել իր պարտքը իր Հայրե-
նիքի հանդեպ: Նա ավել է Հայրենիքին եր-
վիրված մեծափառ այնպիսի հայրապետ-
ներ, ինչպիսին Ներսես Մեծն է, Սահակ
Պարթևը, Ներսես Շնորհալիկ, Ներսես Աշ-
տարակեցին, Խրիմյան Հայրիկը և ուրիշ-
ները:

Մայր Աթոռը անխզելիորեն կապված է ե-
ղել հայ ժողովրդի հետ և նրա հետ միասին
հաշվել պատմության և՛ դառնությունը, և՛
ուրախությունը: Եվ դա ավելի է խտացրել
հավատացյալների սերը դեպի եւ: Հայ հա-
վատացյալը բացառիկ սիրով է կապված ե-
ղել նրա հետ: Մայր Աթոռը հանդիսացել է
ամեն մի հավատացյալի Սրբություն Սրբո-
ցը: Պատմական հայտնի փաստ է, որ պար-
սից Շահ Արքայա թագավորը իր երկրի ար-
հեստագործությունը զարգացնելու նպատա-
կով Հայաստանից բռնությամբ Պարսկաս-
տան բռնեց հսկայական բվով հայ գաղթա-
կանություն: Տարած գաղթականությունը
պարսկական հողի հետ կապելու համար
Էջմիածնի պատերից փառեց մի փառի փառ
և տեղափոխեց Նոր Զուղա՝ տեղափոխելով
հայ եկեղեցիներից մեկի պատի մեջ: Սակայն
խորապես սխալվեց պարսից ղեկավարակալը.
նա չկարողացավ հասկանալ, որ հավատաց-
յալներին Էջմիածնի հետ կապողը նյութական
փառերը չեն, այլ դարերի ընթացքում հավա-
տացյալների խտացված շնորհ գգազմունե-
ները: Եվ տարագիր հայ պանդուխտները ի-
րենց գգազմունքներով կապված մեացին
Մայր Հայրենիքի և Մայր Աթոռի հետ:

Ազատաստի հայ ժողովուրդը երկար ու ծանր մաքառումներից հետո, վերջապես ձեռք բերեց իր ազատությունը և քաղաքական անկախությունը. փոքրիկների մեջ ծնվեց Հայ Պետականությունը — Սովետական Հայաստանը: Իրագործվեց Մայր Աթոռի դարավոր իղձը: Հայաստանի նորաստեղծ պետությունը իր օրինական ձեռքը վերցրեց Հայրենիքի պետական կառավարումն ու քաղաքականությունը: Մայր Աթոռը ազատ շունչ փառեց և հնարավորություն ունեցավ ամբողջապես զբաղվելու եկեղեցական գործերով:

Ահա քան և ինչ տարի է, որ Մայր Աթոռը ակնառես է Մայր Հայրենիքի անօրինակ զարգացմանը ու բարգավաճմանը: Սովետական Միության եղբայրակից ժողովուրդների, առանձնապես ռուս վեհաձեռն և ազնիվ ժողովրդի անշահախնդիր օգնությամբ, նախկին հետամնաց, գաղթականներով և որբերով լեցուն ավերակ երկիրը այժմ դարձել է զարգացած առաջավոր արդյունաբերական երկիր: Կարճ ժամանակվա ընթացքում հիմնվել են տասնյակ արդյունաբերական հրակա գործարաններ և ֆաբրիկաներ, մեքենայացվել է գյուղատնտեսությունը, բարեկարգվել և կառուցվել են նոր քաղաքներ և գյուղեր, բարելավվել է աշխատավորների դրությունը, ծաղկել է ազգային կուլտուրան: Մի դար առաջ պարսկական և տանկական լծի տակ հեծող, արհամարհանքի ենթակա ստրկական վիճակի մեջ դրված ո՛ր հայ մարդը կարող էր անգամ երազել, որ երբևէ հնարավոր կլիներ այսպիսի հսկայաթափ զարգացում: Սովետական Հայաստանում կատարվող այս խոշոր տեղաշարժերը միայն կույրերը կարող են շտեմել և պաշտելի Հայրենիքի նկատմամբ ատելությամբ լցված վատոգի բշտամիները:

Մայր Աթոռը հայրենի կառավարության հանդեպ ցուցաբերել է պատշաճ հավատարմություն: Նա իր ներկայացուցիչների միջոցով բազմիցս դիմել է Մայր Հայրենիքի և Սփյուռքի իր հավատացյալներին՝ հորդորելով սատար հանդիսանալ Մայր Հայրենիքի զարգացմանը և բարգավաճմանը:

Մայր Աթոռը իր հավատարմությունը դեպի Մայր Հայրենիքի ավելի ցայտուն ցուցաբերեց Հայրենական Մեծ պատերազմի ծանր օրերին: Առաջնորդվելով Հայ եկեղեցու դարավոր ավանդություններով, նա կոչ արեց իր հավատացյալներին մի մարդու նման ռափ կանգնել պաշտպանելու վերածննդած Հայրենիքի սրբազան հողը և իր ազատությունը ահարգ բշտանալ ժողովուրդին: Մայր Աթոռի հանձնարարությամբ հայ հավատացյալները Հայրենիքում և գաղթաշխարհում կազմակերպեցին «Մա-

սանցի Դավիթ» տանկային շարասյանը, որ մասնակցեց Հայրենական պատերազմում: Մայր Աթոռի այս ձեռնարկը շատ համեստ ձեռնարկ էր Հայրենիքի վիթխարի ջանքերի մեջ, սակայն դա Մայր Աթոռի և նրա հավատացյալների հայրենասիրական վերաբերմունքն էր դեպի Հայրենիքը: Լավ բարեկամին նեղ օրում կարելի է հանաչել, ինչպես ասում է ժողովրդական իմաստուն ասացվածքը:

Հայրենական պատերազմի այդ ծանր օրերին հայ հայրենասեր եկեղեցականներն արժանավայել դիրք վերցրեց առանձնապես հայոց եկեղեցու հայրագործ կրոնապետը — այն ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ Տ. Գեորգ Արքեպիսկոպոս Չոբեշյանը: Երկարամյա տերափիր այս հայրենասեր եկեղեցականի արժանիքների և մեղվաշուն գործունեության պատշաճ գրեհատականը տվեց Ազգային եկեղեցական ժողովը, որ գերաշնորհ Մրցադաճ, աշխարհի բոլոր կողմերից Ազգային եկեղեցական ժողովի եկած պատգամավորների կողմից, փակ փառալուծությամբ, միաձայնությամբ, ընտրվեց Ամենայն Հայոց Հայրապետ: Գեորգ Զ. Կաթողիկոսի հայրապետական գանձի վրա բազմվել ներկա բախտորոշ պատմական ժամանակաշրջանում, աստվածային նախախնամություն կարելի է համարել:

Իմաստուն և հեղինակավոր վեհապետի ղեկավարության տակ ավելի կազմակերպվեցին և պայծառացան Մայր Աթոռի բնակարանները՝ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքում: Ներկայումս Հայ եկեղեցին ունի Մայր Աթոռին նվիրված բարձրաստիճան և ձեռնարկաբարձր բազմաթիվ եկեղեցականներ: Գեորգ Զ. Կաթողիկոսի ջանքերով վերաբացվել է Հոգևոր հեմարանը, սկսել է հրատարակվել Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին»-ը: Ստեղծվել է ավելի սերտ փոխհարաբերություն էջմիածնի և Կիլիկիայի աթոռների միջև: (Այժմ Կիլիկիայի կաթողիկոսության գլուխ է կանգնած մեծ հայրենասեր Շնորհազարդ Պարեգին Կաթողիկոս Չոլսեփյանը):

Ցավալի է պակայն նշել, որ վերջերս փառապաշտ և լավամտ մրնոյրառում, երբ Սովետական Միության բշտամի ուժերն ավելի են աշխուժացել, հայրենադավ որոշ մարդիկ, աստանայածին օտարի թելադրանքով, անսանձ արշավ են սկսել Մայր Հայրենիքի և նրա բարգավաճման սատար հանդիսացող տմեն մի կազմակերպության դեմ, ի թիվս որոց նաև Հայ եկեղեցու և նրա հոգևոր կենտրոնի — Մայր Աթոռի դեմ: Նրանք տեղափոխվելով միջոցներով աշխատում են սուր ջուր լցնել Սփյուռքում գտնվող հայ հավատացյալների կրոնական և ազգային զգացմունք-

ների վրա: Նրանք վիրավորում են հայ մարդու ազգային արժանապատվությունը օտարի մոտ մինչև այն աստիճան, որ ամենաանվայել խոսքերով հայհույում են ծերունազարդ Հայրապետին: Եվ այդ անում են այն ժամանակ, երբ դեռ Սփյուռքում նոր է ստացվել ներողամիտ և լայնախոհ Հայրապետի կոնդակը հայ եկեղեցու միասնականության մասին, որի նպատակն է համերաշխություն հաստատել օտար հարկի տակ ապաստան գտած հայ համայնքներում: Հայ ժողովուրդը իր պատմության մեջ ունեցել է դավաճաններ, որոնք իրենց անձնական նեղ եսասիրական շահերից ելնելով՝ խժոժություններ են ստեղծել հայ համայնքներում՝ Վասակը, Մերուծանը և ուրիշները: Սակայն նրանցից ոչ մեկը այն աստիճան չի վիրավորել հայ մարդու արժանապատվությունը, չի ռաւահարել իր ազգային սրբությունները, օտարի առաջ չի ամբաստանել իր եղբորը, այնքան անվայել չի պախարակել իր հայ եկեղեցականին, որքան ներկա հայրենադավերը:

Հայրենադավ այս տարրերի երեսից, Հայ եկեղեցու նկատմամբ բշտամարտ արամադրված որոշ կառավարություններ փորձում են միջամտել հայ եկեղեցական գործերում և չտեսնված բռնություններ գործադրում Հայ եկեղեցու նկատմամբ: Այդ են վկայում Պարսկական կառավարության միջամտությունը Իրանի երկու բեմակալների հարցում: Հայ համայնքների համար ոչ պակաս անվայել է Պոլսի Պատրիարքության շուրջը ստեղծված անախոժությունները, Դամասկոսի հայկական եկեղեցում սարված կոի-

վրն ու անպատվությունը, Իրան-Հնդկաստանի բեմակալ Առաջնորդի դեմ սարված ցույցը և այլն: Ցավալի է նշել, որ այդ բոլոր խառնակությունը արվում է օտարի քաղաքներում, ժամանակակից Մերուծանների և Վասակների ձեռքով:

Սակայն իզուր պիտի անցնի խառնակիչ հայրենադավերի նոր արշավանքը Հայ եկեղեցու դեմ: Որքան էլ ուզենան այդ տարրերը կատարել իրենց սև գործը, նրանց չի հաջողվի կտրել Հայ եկեղեցու ջերմեռանդ հավատացյալներին իրենց սիրելի Հայրենիքից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնից: Ոչ մի բռնություն չի կարող շեղել օրինապահ հայ եկեղեցականին իր հաստատուն ընթացքից: Ոչ ոք չի կարող պարտադրել Ամենայն Հայոց Հայրապետին՝ դեմ գնալ իր ազգային-եկեղեցական ավանդություններին և Հայրենիքի դավաճանի սև կնիքը վերցնել իր վրա: Իմաստուն և շրջահայաց Հայրապետը ոչ ոքի բույլ չի տա Աստծու տաճարը վաճառատուն դարձնել, ինչպես ավետարանել է Փրկիչը՝ «Մի՛ առնէ՛ք գտուն Հօր իմոյ տուն վաճառի» (Հովն. Բ. 16):

Նոր արշավանքը ավելի պիտի համախմբի Սփյուռքը Մայր Աթոռի շուրջը, ՈՐԸ ԱՆՎԵՐԱՊԱՆԿ ԿԵՐՊՈՎ ԵՎ ԱՆԵՐԿԱՄՏՈՐԵՆ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ Է:

Ամենայն Հայոց Հայրապետը հորդորում է իր սիրասուն զավակներին՝ շխարվել սատանայածին դավադիրների ստապատիր զրպարություններից և հաստատապես կանգնել Հայրենասերների բարձր դիրքերում, ինչպես վարվեցին Հայրենական Մեծ պատերազմի ծանր օրերին:

